Է. Դ. ՄԱԹԵՎՈՍՈՎ

ԿՈՒՏԱԿՄԱՆ ՖՈՆԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական կուտակումներն իրենց իրային բովանդակությամբ նյութական բարիքների ամբողջություն են, որոնք ընդլայնված վերարտադրության պրոցեսում կատարում են տարբեր ֆունկցիաներ և տարբեր դերեր։ Այստեղ պետք է տարբերել երեք ֆունկցիոնալ մասեր. ա) սեփական կուտակումներ, բ) սպառման առարկաների կուտակումներ, գ) ապահովագրական, պահեստային պաշարների կուտակումներ։

Սեփական կուտակումները նախատեսվում են արտադրության միջոցների պաշարներ ու նյութական արտադրության աշխատողների համար կենսական միջոցներ ստեղծելու և ընդլայնելու համար։ Պաշարների այդ մասում մարմնավորված արժեքը մշտապես պահպանվում է վերարտադրության պրոցեսում։

Սպառողական առարկաների կուտակումներն անհրաժեշտ են ամբողջ բնակչության պահանջմունքների բավարարման, այդ թվում նաև ոչ արտադրական ոլորտի աշխատողներին կենսական միջոցներով ապահովելու համար։ Այն ապահովում է ոչ արտադրական ոլորտի կանոնավոր գործունեության համար անհրաժեշտ պաշարների ընդլայնումը։ Այդ դեպքում սպառողական արժեքը չի վերարտադրվում, այլ մշտապես անհետանում է անձնական, ոչ արտադրական սպառման պրոցեսում։

Ապահովագրական, պահեստային պաշարների կուտակումները սեփական և սպառողական կուտակումների նկատմամբ ունեն միջանկյալ բնույթ։ Պահեստային պաշարների կուտակման ենթակա են արտադրության և սպառման ոլորտներից դուրս եկած արտադրության միջոցները և սպառման առարկաները։ Պահեստային պաշարների (ընթացիկ արտադրական սպառման, արտադրական կուտակման կամ անձնական սպառման համար) օգտագործման աստիճանից կախված փոխվում է կուտակման այդ մասերի մեջ մարմնավորված արժեքի բնույթը։ Վերարտադրության ժամանակ արտադրության պրոցեսի մեջ ընդգրկված նյութական պաշարները պահպանում են իրենց արժեքը։ Ոչ արտադրական սպառմանն ուղղված նյութական պաշարների արժեքը սպառողական ֆոնդերի տարրերի գործելու ժամանակին համապատասխան աստիճանաբար սպառվում են։

Այստեղից կուտակման ֆոնդն իր կազմում ընդգրկում է. ա) արտադրական կուտակման ֆոնդը, բ) ոչ-արտադրական կուտակման ֆոնդը և գ) պաշարների ընդլայնման ֆոնդը։

Արտադրական ֆոնդի տնտեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է նյութական արտադրության ճյուղերում ընդլայնված վերարտադրության աղբյուր և օգտագործվում է հիմնական ու շրջանառու արտադրական ֆոնդերի մեծացման համար։

Ժողովրդական տնտեսության հիմնական արտադրական ֆոնդերի նյութական-իրային բովանդակությունը կազմում են աշխատանքի միջոցները։ Դրանց շարքին են պատկանում մեքենաները, սարքավորումները, գործիքները, արտադրական շենքերը, փոխադրական և աշխատանքի այլ միջոցները։ Հիմնական ֆոնդերը մասնակցում են աշխատանքի պրոցեսին ամբողջությամբ՝ յուրամաթիվ անգամ պահպանելով իրենց բնա-իրային ձևը։ Դրանց արժեքը նոր ստեղծված արտադրանքին փոխանցվում է մաս-մաս, մաշվածության չափին համապատասխան, ամորտիզացիոն հատկացումների ձևով։ Հիմնական ֆոնդերի կազմում վճռական դեր են խաղում աշխատանքի մեքենայական միջոցները՝ մեքենաները, սարքավորումները, որոնք, Կ. Մարքսի արտահայտությամբ, պատկերում են «արտադրության ոսկրային ու մկանային համակարգը»։

Հումքը, նյութերը, վառելիքը և աշխատանքի մյուս առարկաները, ինչպես և այդ տարրերի պաշարները, անհրաժեշտ են արտադրության կանոնավոր ընթացքն ապահովելու համար և կազմում են շրջանառու ֆոնդերի իրային բովանդակությունը։ Ի տարբերություն հիմնական ֆոնդերի, դրանք հանդիսանում են թողարկվող արտադրանքի բաղկացուցիչ մասը և դրանց արժեքը

տվյալ արտադրական պարբերությունում ամբողջությամբ փոխանցվում է նոր ստեղծված արտադրանքին։

Հիմնական ու շրջանառու ֆոնդերը, որպես ժողովրդական տնտեսության արտադրական ֆոնդերի տարբեր մասեր, հանդիսանում են ընդլայնված վերարտադրության անհրաժեշտ միջոցներ։

Ոչ արտադրական կուտակման ֆոնդը հասարակության պահանջմունքները բավարարում է ոչ արտադրական հիմնական ու շրջանառության ֆոնդերով։ Դրանց թվին պատկանում են ամենից առաջ բնակարանային ֆոնդը և կուլտուրական-կենցաղային ու աշխատավորների բժշկական սպասարկման հիմնարկների հիմնական ֆոնդերը։

Պաշարների ընդլայնման ֆոնդի կազմավորումը ծառայում է ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման ապահովման, այդ պրոցեսում ծագող առանձին-մասնակի անհամամասնությունների նախազգուշացման և վերացման նպատակին։

Կուտակման ֆոնդի հաշվարկման ուրվագիծը ՍՍՀՄ-ում ամբողջությամբ և միութենական հանրապետություններում միասնական է և բաղկացած է հիմնական (արտադրական և ոչ-արտադրական) ու շրջանառու ֆոնդերից, ինչպես նաև նյութական պաշարների աճից։

Սովետական կառավարությունը, կուտակման ֆոնդի պլանաչափ բաշխումն իրականացնելով, ներգործում է սոցիալիստական վերարտադրության համամասնությունների կատարելագործման և ժողովրդական տնտեսության ճյուղերի ու ոլորտների միջև առավել արդյունավետ հարաբերությունների սահմանման վրա։ Ժողովրդական տնտեսության կառուցվածքը կախված է նրա առանձին ճյուղերի զարգացման թափից (տեմպից), իսկ վերջինս որոշվում է այդ ճյուղերն ուղղված կուտակման ֆոնդի ծավալով։ Պետությունը, կուտակման ֆոնդի օգտագործման կառուցվածքը որոշելով, ինքնին կանխանշում է ժողովրդական տնտեսության կառուցվածքի փոփոխությունները և կարգավորում նրա առանձին ճյուղերի զարգացման առավել օպտիմալ համամասնությունները։

Կուտակման ֆոնդի կառուցվածքը վերջին տարիներին բնութագրվում է հետևյալ աղյուսակի տվյալներով.

Կուտակման ֆոնդի կառուցվածքը Հայկական ՍՍՀ ազգային եկամտի մեջ
(ամբողջի նկատմամբ տոկոսներով, համապատասխան տարիների գներով)

	1961	1962	1963	1964	1965	1970 թ. պլանի նախագիծը
Ընդամենը կուտակումներ	100	100	100	100	100	100
որից՝						
1. Հիմնական ֆոնդերի աճ այդ թվում	60,7	65,0	66,1	58,2	62,1	75,1
ա) արտադրական հիմնական ֆոնդերի աճ	28,7	38,3	40,4	31,7	36,7	46,0
բ) ոչ արտադրական հիմնական ֆոնդերի աճ	32,0	26,7	25,7	26,5	25,4	29,1
2. Նյութական շրջանառու միջոցների և պաշարների աճ	26,8	23,4	20,5	30,8	28,1	18,5
3. Այլ ծախսեր	12,5	11,6	13,4	11,0	9,8	6,4

Աղյուսակում բերված տվյալներից պարզ երևում է, որ կուտակման ընդհանուր ծավալի մեջ ամենամեծ մասը կազմում է ժողովրդական տնտեսությունում արտադրական ֆոնդերի ավելացումը։ Վերջինիս չափերից են կախված ընդլայնված սոցիալիստական վերարտադրության մասշտաբները և թափը։ Հիմնական ու շրջանառու ֆոնդերի աճը 1965 թ. կազմել է կուտակման ֆոնդի ընդհանուր ծավալի մոտավորապես 2/3։ Այդ դեպքում արտադրական ֆոնդերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռը զբաղեցնում է հիմնական ֆոնդերի աճը, որոնք հանդիսանում են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում հասարակական աշխատանքի անշեղ աճի նյութա-տեխնիկական և արտադրության անընդհատ կատարելագործման հիմքը։ Եթե հիմնական արտադրական ֆոնդերի աճը 1965 թ. կազմել է 36,7 տոկոս, ապա 1970 թ. նրան բաժին կընկնի հանրապետության ամբողջ կուտակման ֆոնդի մոտավորապես կեսը։

Հանրապետության կուտակման ֆոնդի կառուցվածքում կարելի է նկատել նյութական շրջանառու միջոցների և պաշարների բաժնի աճի իջեցման տենդենց։ Եթե 1961 թ. նյութական շրջանառու միջոցների և պաշարների բաժինը կազմել է ամբողջ կուտակման ֆոնդի 26,8 տոկոսը, ապա 1967 թ.՝ 20,5 տոկոսը, իսկ 1970 թ. կկազմի 18,5 տոկոս։ 1964—1965 թթ. դրանց բարձր տեսակարար կշիռը կապված էր ապրանքա-նյութական արժեքների գերնորմատիվային պաշարների շեշտակի ավելացման հետ։ Հիմնական անարտադրական ֆոնդերի աճի բաժինը ներկայումս կազմում է հանրապետության կուտակման ընդհանուր ծավալի 25—26 տոկոսը։ Առաջիկա հնգամյակում նախատեսված մասշտաբի բնակարանային ու կուլտ-կենցաղային շինարարության հետ կապված հիմնական ոչ արտադրական ֆոնդերի բաժնի աճը ներկայիս համեմատությամբ կավելանա և 1970 թ. կկազմի կուտակման ամբողջ ֆոնդի 29 տոկոսը։ Այդպիսով, կուտակման ֆոնդն իր աճած մասով, ինչպես և սպառման ֆոնդը կծառայի ժողովրդի բարեկեցության բարձրացման անմիջական աղբյուր։

Կուտակման ֆոնդի կառուցվածքը և նրա առանձին տարրերի միջև եղած հարաբերությունն անմիջական ներգործություն է ունենում տնտեսական զարգացման թափի վրա և որոշում է ազգային եկամտի կուտակման մասի արդյունավետ օգտագործման աստիճանը։ Կուտակման ֆոնդի ներսում ամենակարևոր համամասնությունը հանդիսանում է արտադրական և ոչ արտադրական կուտակումների հարաբերակցությունը։

Նրանց միջև տարբերությունը կայանում է նրանում, որ նյութական արտադրությունում կուտակված միջոցների օգտագործմանը զուգընթաց ստեղծվում է ազգային եկամուտ, իսկ ոչ արտադրական ոլորտում չի ստեղծվում սպառողական արժեք, այլ դրանց օգտագործման միջոցով տեղի է ունենում աշխատավորների պահանջմունքների բավարարում։ Սակայն, ոչ արտադրական ոլորտում կուտակման միջոցների օգտագործումն անուղղակիորեն ազդում է աշխատանքի արտադրողականության բարձրացման և ազգային եկամտի աճի վրա, աշխատավորների բնակարանային պայմանները բարելավելու և դրա հետ կապված հոսունությունն իջեցնելու, ինչպես և բանվորների որակավորումն բարձրացնելու, գիտության զարգացման ու տեխնիկական առաջադիմության ուղիով։

Անհրաժեշտ է նշել, որ ԿՎՎ մեթոդիկայի համաձայն ոչ արտադրական կուտակման ֆոնդի կազմում հիմնական ոչ արտադրական ֆոնդերի (բնակարանային ֆոնդ, դպրոցներ, ակումբներ, թատրոններ, հիվանդանոցներ և այլն) հետ միասին ընդգրկվում են նաև առևտրի մեջ ապրանքների մնացորդների և հանրային ու անձնական տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների պաշարների աճը։ Մյուս կողմից, անձնական սպառման երկարատև օգտագործման առարկաների (կահույք, մարդատար ավտոմեքենաներ, հեռուստացույցներ, ռադիոընդունիչներ, լվացքի մեքենաներ, վերնահագուստներ և այլն) արժեքը, որոնք սպառվում են մի շարք տարիների ընթացքում ամբողջությամբ հաշվարկվում են ընթացիկ սպառման ֆոնդի կազմում։ Նման մեթոդիկան արհեստականորեն մեծացնում է սպառման ֆոնդը և համապատասխանորեն փոքրացնում ոչ արտադրական կուտակման ֆոնդը։ Բնակչության մոտ գտնվող երկարատև օգտագործման առարկաների պաշարների աճը պետք է հաշվարկվեն ոչ արտադրական կուտակումների կազմում, իսկ նրա տարեկան մաշվածության արժեքը, հիմնական ոչ արտադրական ֆոնդերի տարեկան մաշվածության արժեքի նման անհրաժեշտ է ընդգրկել ընթացիկ սպառման ֆոնդի կազմում։

Որոշ տնտեսագետներ (Կաց, Կիրիչենկո) ոչ արտադրական ֆոնդերի աճը դիտում են սպառման ֆոնդի կտրվածքով, ինքնին ժխտելով ոչ արտադրական կուտակման ֆոնդի գոյությունը։ «...Սպառման ֆոնդի տարեկան արդյունքին պետք է վերագրել ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև օգտագործման սպառման առարկաների ամբողջ զանգվածը, այդ թվում նոր կառուցված բնակարանները, հիվանդանոցները, ակումբները և այլն»[1]։ «...Անհրաժեշտ է հետևողականորեն պահպանել ընդունված տեսական դրույթը, որ ազգային եկամտի մեջ սպառման ֆոնդը կազմում է ոչ արտադրական սպառման կարիքների համար ստացվող բարիքների ամբողջ զանգվածը, հետևաբար, ընդգրկում է և բնակարանային ֆոնդի աճը և մյուս ոչ-արտադրական ֆոնդերը»[2]։

---

[1] А. И. Кац, Производительность труда в СССР и главных капиталистических странах, изд. «Экономика», 1964, стр. 44.

[2] В. П. Кириченко, Национальное богатство СССР, изд. «Экономика», 1964, стр. 198.

Ընդսմին, նրանք դիմում են կուտակման մարքսյան բնորոշմանն, այն դիտելով որպես հավելյալ արժեքի կապիտալացում, արտադրողական և շրջանառու կապիտալի փոխարկում, նրա մեջ չընդգրկելով արտադրության և փոխանակության ոլորտներից դուրս գործող կտրական իմաստով կուտակման ընդլայնման ֆոնդերը, այսինքն ոչ արտադրական ոլորտի ընդլայնման ֆոնդերը (այդ թվում նաև անձնական սպառման կուտակման ֆոնդերը)։ Սակայն, պետք է նշել, կուտակման բնորոշումը, որպես հավելյալ արժեքի կապիտալացում, Մարքսը տվել է այն ընդհանուր վերացականության շրջանակներում, որը օգտագործվել է «Կապիտալ»-ում, հատկապես ոչ արտադրական ոլորտից կտրված։ Դրա համար մարքսյան բնորոշումն ընդգրկում է կուտակման հիմնական, վճռական մասը, որով բնութագրում է որպես արտադրական հարաբերությունների կատեգորիա, մաքուր ձևով վերցված։ Ի միջի այլոց, իրական կապիտալիստական հարաբերություններն ընդգրկում են և արտադրական և ոչ արտադրական կապերը և ոչ արտադրական ոլորտին փոխանցվող արտադրված արտադրանքի արժեքի մասերն, ինչպես ընթացիկ սպառման, այնպես էլ նրանում կուտակման համար։ Հետևաբար, կուտակման մարքսյան բնորոշումը կուտակման ֆոնդը չի սահմանափակում միայն արտադրական կուտակման շրջանակներում։

Այստեղ տեղին է նշել, որ Կ. Մարքսը «Հավելյալ արժեքի թեորիաներ»-ում ընդգծել է «Հավելյալ արժեքի մի մասը... պետք է վերածվի հիմնական և փոփոխական կապիտալի մասերի։ Իսկ այն համամասնությունը, որում նա բաժանվում է կապիտալի այդ երկու տարբեր մասերի, կախված է կապիտալի տվյալ օրգանական կազմից»[3]։

Վ. Ի. Լենինը, ինչպես և Կ. Մարքսը կուտակման ամբողջական ֆոնդը ստորաբաժանում է երկու մասի. «...շահույթի կուտակման մասը... իրականում... ծախսվում է. 1) հիմնական կապիտալի և 2) աշխատավարձի համար»[4]։

Կուտակման հիմնական բովանդակությունը որոշվում է այն օբյեկտիվ անհրաժեշտ պրոցեսով, որի ընթացքում հասարակությունը ստեղծում է կանոնավոր գործող կենսականորեն կարևոր արտադրական և ոչ արտադրական երկու ոլորտների համար անհրաժեշտ արտադրական միջոցների և սպառման առարկաների պաշարների հիմնական զանգվածը։ Կապիտալիզմի պայմաններում դա ամենից առաջ հավելյալ արժեքի կապիտալացման, նրա իրական կապիտալի (արտադրողական և շրջանառու կապիտալի) փոխարկման պրոցես է։ Դրա հետ միասին նա եկամուտների՝ ոչ արտադրական ոլորտի հարստության վերածվող տարրերի կուտակման պրոցես է։

Սոցիալիզմի ժամանակ իրական կուտակման նյութական հիմքը հանդիսանում է արտադրության միջոցների և անձնական սպառման առարկաների աճը, որոնց ծավալը և կառուցվածքը համապատասխանում է հասարակական պահանջմունքներին և ծառայում է նրանց հնարավոր ավելի լրիվ բավարարմանը։ Դրա համար կուտակման պրոցեսի արդյունքը հանդիսանում է ինչպես արտադրական, այնպես էլ ոչ արտադրական կուտակման ֆոնդերի կազմավորումը։

Արտադրական և ոչ արտադրական կուտակումների համամասնությունների կարևոր ցուցանիշ է նրանց նորմաների միջև գոյություն ունեցող հարաբերությունը. Այդ երևում է հետևյալ աղյուսակից՝

Տոկոսներով

	1961	1962	1963	1964	1965	1970 թ. պլանի նախագիծը
Արտադրական կուտակման նորման	16,6	19,7	17,1	18,9	20,3	20,8
Ոչ արտադրական կուտակման նորման	10,4	9,6	8,2	8,8	8,7	10,0

Ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից, արտադրական կուտակման նորման՝ հաշվարկված որպես հարաբերություն հիմնական արտադրական ֆոնդերի և նյութական շրջանառու ֆոնդերի ու պաշարների աճի (առանց առևտրի մեջ ապրանքային պաշարների և բնակչության մոտ եղած գյուղատնտեսական մթերքների աճի) հանրապետությունում օգտագործված ազգային եկամտի նկատմամբ, 1961 թ. համեմատությամբ 1965 թ. ավելացել է 22,3 տոկոսով։

[3] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. II, стр. 530.
[4] В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 2, стр. 159.

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ոչ արտադրական կուտակման նորման՝ հաշվարկված որպես հարաբերություն ոչ արտադրական հիմնական ֆոնդերի աճի (ներառյալ առևտրի մեջ ապրանքային պաշարների և բնակչության մոտ գյուղատնտեսական մթերքների աճը) օգտագործված ազգային եկամտի նկատմամբ համապատասխանաբար որոշ չափով իջել է։

Այդ երևույթը կապված է 1961—1965 թթ. հասարակական արտադրության արդյունավետության իջեցումն փոխհատուցելու նպատակով հանրապետության ազգային եկամտի մեջ արտադրական կուտակման նորմայի խիստ ավելացման հետ։ 1965 թ. համեմատությամբ 1970 թ. արտադրական կուտակման նորմայի 2,5 տոկոս աճի հետ միասին հանրապետության ոչ արտադրական կուտակման նորման կավելանա 14,9 տոկոսով, այսինքն ընթացիկ հնգամյակում ոչ արտադրական կուտակման նորման կաճի ավելի արագ, քան արտադրական կուտակման նորման։ Այդպիսի օրինաչափության կարելի է հասնել հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման հիման վրա, որն արտահայտվում է առանց արտադրական կուտակման նորմայի ավելացման ընդլայնված վերարտադրության բարձր ու կայուն թափի ապահովման մեջ։ Այդ դեպքում կարելի է ավելի շատ միջոցներ (պաշարներ) առանձնացնել ոչ արտադրական կուտակման համար։

Հանրապետության կուտակման ամբողջական ֆոնդի մեջ ոչ արտադրական կուտակման բաժնի ավելի արագ աճը որոշվում է նրանով, որ բնակարանների, հիվանդանոցների, դրպրոցների, նախադպրոցական մանկական հիմնարկների և այլ կարևոր պահանջների փաստացի ձեռք բերված մակարդակը չի կարելի ընդունել բավարար։ Ոչ արտադրական ոլորտի հիմնարկների կողմից Հայկական ՍՍՀ բնակչության սպասարկման փաստացի մակարդակի համեմատությունը բավարար ապահովվածության նորմաների հետ, երևում է հետևյալ աղյուսակից.

Տոկոսներով

	Չափանիշ	1958	1965	Բավարար ապահովվածության նորման[5]
Հիվանդանոցներ	10 հազար մարդու հաշվով հիվանդանոցային մահճակալների թիվը	66	81	124
Մանկապարտեզներ և մանկամսուրներ	10 հազար մարդու հաշվով տեղերի թիվը	111	287	400
Խանութներ	10 հազար մարդու հաշվով աշխատատեղերի քանակը	37	46	66
Ճաշարաններ	10 հազար մարդու հաշվով նստատեղերի քանակը	145	261	400

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ թեև 1958—1965 թթ. Հայկական ՍՍՀ-ի ոչ արտադրական հիմնական ֆոնդերը նշանակալիորեն աճել են, բայց բավարար ապահովվածության որոշակի նորմաների մակարդակին հասնելու համար ոչ արտադրական հիմնական ֆոնդերի ընդհանուր մեծությունը պետք է ավելացնել մոտավորապես 1,5—2 անգամ։ Հետևաբար, Հայկական ՍՍՀ հիմնական ոչ արտադրական ֆոնդերի զարգացման առկա թերությունների արագ հաղթահարման համար անհրաժեշտ է հանրապետության ազգային եկամտի մեջ բարձրացնել ոչ արտադրական կուտակումների բաժինը։

Մյուս կողմից, նյութական արտադրության ճյուղերի զարգացման թափի արագացումը, կապված ժողովրդական տնտեսության մեջ արդյունավետ համամասնության պահպանման հետ, որոշվում է 1-ին և 2-րդ ստորաբաժանումների ճյուղերում կուտակման հարաբերությամբ։

Որքան զգալի է երկու ստորաբաժանումներում ծախսված արտադրական ֆոնդերի փոխհատուցման գծով հասարակության պահանջմունքների համար արտադրության միջոցներից բաղկացած արտադրանքի փաստացի ծավալի բարձրացումը, այնքան լայն են իրական կուտակման հնարավորությունները բոլոր արտադրական ոլորտներում։ Դա փաստորեն նշանակում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում արտադրական կարողությունների անընդհատ աճ։ Դրա համար 1-ին ստորաբաժանման մեջ կուտակման թափը վերջին հաշվով որոշում է ամբողջ ժողովրդական տնտեսությունում կուտակման թափը, ներառյալ 2-րդ ստորաբաժանման ճյուղերը և

[5] М. З. Бор, Очерки по методологии и методике планирования, изд. «Экономика», 1964, стр. 179.

ոչ արտադրական ոլորտը։ Հասարակական արտադրության 1-ին և 2-րդ ստորաբաժանումների ճյուղերում կուտակումների միջև իրական հարաբերությունը կախված է երկրի տնտեսական զարգացման ձեռք բերած մակարդակից և այդ ժամանակաշրջանում կուտակման և սպառման հուզակցման բնույթից։ Բնական է, ինչքան բարձր է երկրի տնտեսական զարգացման մակարդակը և ամբողջությամբ ժողովրդական տնտեսության ու արդյունաբերության արտադրանքի մեջ արտադրության միջոցների տեսակարար կշիռը, այնքան լայն են իրական հնարավորությունները երկու ստորաբաժանումներում զարգացման թափերի մերձեցումը։ Մեր երկրում 1-ին ստորաբաժանման ճյուղերում կուտակումները հատկապես բարձր թափով իրականացվում էր մինչպատերազմյան հնգամյակների և ետպատերազմյան ժամանակաշրջանի սկզբի տարիներին։ Ներկայումս ծանր արդյունաբերության զարգացման ձեռք բերած նվաճումները հնարավորություն կտան զգալիորեն ավելացնելու 2-րդ ստորաբաժանման ճյուղերում կուտակումները, որն իր արտահայտությունն է գտնում սպառման առարկաներ արտադրող, արդյունաբերության արագ թափով զարգացման և ոչ արտադրական շինարարության բաժնի բարձրացման մեջ։ Դա մեծապես կնպաստի 1-ին և 2-րդ ստորաբաժանումներում կուտակման թափի մերձեցմանը։ Սակայն կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում գործող արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճի օրենքը պահանջում է կուտակման ավելի բարձր թափ 1-ին ստորաբաժանման ճյուղերում որպես ամբողջ ժողովրդական տնտեսության ընդլայնված վերարտադրության հիմք։ Միջճյուղային հաշվեկշռի տվյալներով, Հայկական ՍՍՀ հասարակական արդյունքի մեջ 1963 թ. ամբողջ կուտակումների 59,8 տոկոսը կազմել են արտադրության միջոցները, իսկ 40,2 տոկոսը սպառման առարկաները։

Կուտակման պրոցեսում կարևոր նշանակություն ունի այն հարաբերակցությունը, որը ստացվում է հիմնական արտադրական ֆոնդերի և նյութական շրջանառու միջոցների աճի միջև։

Առաջադիմական ուղղությունը հանդիսանում է հիմնական ֆոնդերի համեմատությամբ նյութական շրջանառու միջոցների փոքրացումը։ Դա հնարավորություն կտա հարաբերականորեն կրճատել շրջանառու ֆոնդերի կուտակումները և ավելացնել հիմնական ֆոնդերինը, որոնք ապահովում են երկրի արտադրական կարողությունների արագ աճը և արտադրության աճման թափի բարձրացումը։ Հանրապետության հիմնական ու շրջանառու ֆոնդերի միջև աճման թափերը բնութագրվում են հետևյալ տվյալներով.

Հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների աճման թափերի հարաբերությունը Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսությունում[6] (տարվա վերջին, 1959 թ. նկատմամբ տոկոսներով)

	1959	1960	1961	1962	1963	1964	1965
Հիմնական ֆոնդեր (ներառյալ անասունները)	100	111	121	134	150	164	178
այդ թվում							
Հիմնական արտադրական ֆոնդեր	100	112	120	136	153	169	186
Շրջանառու միջոցներ	100	107	118	134	140	157	175
այդ թվում							
Պարանթա-նյութական արժեքներ	100	106	115	130	136	154	169

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ հիմնական արտադրական ֆոնդերի աճման թափը զերազանցում է նյութական շրջանառու միջոցների աճման թափին։ Եթե բոլոր հիմնական ֆոնդերը 1959—1965 թվականներին ավելացել են 78 տոկոսով, ապա արտադրական հիմնական ֆոնդերը՝ 86, իսկ շրջանառու միջոցները՝ 75 տոկոսով։

Հիմնական ու շրջանառու ֆոնդերի կուտակման հարաբերության վրա էականորեն ազդող գործոն է հանդիսանում նյութական արտադրության ճյուղային կառուցվածքի փոփոխումը։ Ճյուղերի տեսակարար կշռի բարձրացումը, որոնց արտադրական կառուցվածքում շրջանառու ֆոնդերի համեմատությամբ, հիմնական ֆոնդերն ունեն մեծ բաժին, նպաստում է վերջինիս ավելի

6 Շրջանառու միջոցների վերաբերյալ տվյալները բերված են պետական և կոոպերատիվ կազմակերպությունների գծով, բայց առանց կոլտնտեսությունների շրջանառու միջոցների։

արագ թափով աճին։ Եվ ընդհակառակը, զգալի շրջանառու միջոցներ ունեցող ճյուղերի բաժնի ավելացումը կբարձրացնի այդ ֆոնդերի տեսակարար կշիռն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ։

Ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերում, այդ թվում նրա առաջատար ճյուղում, արդյունաբերության մեջ հիմնական ու շրջանառու միջոցների միջև եղած հարաբերությունն էականորեն տարբերվում է։

Այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են մետալուրգիան, էլեկտրաէներգետիկան, ինչպես և քիմիան ու շինանյութերի արդյունաբերությունը բնութագրվում են արտադրության բարձր ֆոնդատարությամբ և կապիտալատարությամբ։

Այդ ճյուղերում արդյունաբերա-արտադրական հիմնական ու շրջանառու միջոցների ընդհանուր գումարի 80 տոկոսից ավելին բաժին է ընկնում հիմնական ֆոնդերին։ Թեթև ու սննդի արդյունաբերությունն, ինչպես և մասնակիորեն մեքենաշինությունն ու մետաղամշակությունն ունեն շրջանառու ֆոնդերի զգալի տեսակարար կշիռ։

Այստեղից առանձին ճյուղերի ոչ միատեսակ աճման թափը ներգործում է կուտակման ֆոնդի մեջ հիմնական արտադրական ֆոնդերի և նյութական շրջանառու միջոցների հարաբերակցության վրա։ Վերջին տարիներին Հայկական ՍՍՀ-ում նկատվում է այնպիսի ճյուղերի զարգացման ավելի արագ աճ, ինչպիսիք են գունավոր մետալուրգիան, քիմիան, էլեկտրաէներգետիկան, շինանյութերի արդյունաբերությունը, որը նպաստեց կուտակման ֆոնդի մեջ հիմնական արտադրական ֆոնդերի բաժնի բարձրացմանը։ Եթե 1959 թ. արտադրական ֆոնդերի ընդհանուր գումարի մեջ շրջանառու միջոցների բաժինը կազմել է 27 տոկոս, ապա 1965 թ. այն իջավ մինչև 25,8 տոկոս։ Հետևաբար, ուսումնասիրվող ժամանակաշրջանում հիմնական ֆոնդերի բաժինը բարձրացավ արտադրական ֆոնդերի ընդհանուր ծավալի մեջ։ Այդ ուղղությունը կգործի նաև ընթացիկ հնգամյակում (1966—1970 թթ.)։ Նախատեսվում է գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, էլեկտրաէներգետիկայի, շինանյութերի արդյունաբերության զարգացման առավելագույն թափ։ Դա կապահովի կուտակման ֆոնդի մեջ հիմնական ֆոնդերի կուտակման բարձր տեսակարար կշիռ։ Բացի դրանից մեքենաշինության մեջ ևս հիմնական ֆոնդերի տեսակարար կշիռը կբարձրանա։

Անցած յոթնամյակում հանրապետությունում արտադրության միջոցների արտադրության և սպառման միջոցների արտադրության զարգացման հարաբերությունները ճիշտ ձևով չդրսևորվեցին։ «Ա» խմբի 2,3 անգամ աճի պայմաններում «Բ» խումբը միայն 1,5 անգամ է աճել։ Սպառման առարկաներ թողարկող արդյունաբերության ճյուղերի աճման թափի, դանդաղ զարգացման վրա ազդել է նաև գյուղատնտեսության ետ մնալը։ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների պլանով նախատեսվում է արտադրության միջոցների արտադրության և սպառման առարկաների արտադրության աճման թափերի մերձեցում։ Դա պահանջում է զգալիորեն ավելացնել թեթև ու սննդի արդյունաբերության ճյուղերի զարգացմանն ուղղված կուտակման ֆոնդը, որտեղ արդյունաբերա-արտադրական ֆոնդերի մեջ շրջանառու միջոցները կազմում են մոտ 50 տոկոս։ Դրա շնորհիվ կուտակման ֆոնդի մեջ նյութական շրջանառու միջոցների բաժինը մի քանի անգամ կավելանա։ Սակայն, թեթև ու սննդի արդյունաբերության համեմատությամբ ծանր արդյունաբերության ճյուղերի աճման թափի, նախկինի նկատմամբ, թեև փոքր չափերով, առաջընթացը կնպաստի կուտակման ֆոնդի մեջ հիմնական արտադրական ֆոնդերի գերիշխող բաժնի պահպանմանը։

Հետևաբար, կուտակման ֆոնդի մեջ հիմնական արտադրական ֆոնդերի և նյութական շրջանառու միջոցների հարաբերակցության վրա ազդում են իրար հակազդող երկու գործոններ։ Եթե կապիտալատար արտադրության աճը տանում է դեպի հիմնական արտադրական ֆոնդերի տեսակարար կշռի բարձրացմանը, ապա ժողովրդական սպառման ապրանքներ թողարկող ճյուղերի զարգացման արագացրած թափը նպաստում է կուտակման բաժնում շրջանառու միջոցների ավելացմանը։ Դրա համար ժողովրդական տնտեսության զարգացման յուրաքանչյուր կոնկրետ ժամանակամիջոցում, վերջինիս հատուկ, վերարտադրության որոշակի պայմանների ազդեցության տակ կուտակման ֆոնդի մեջ հիմնական արտադրական ֆոնդերի և շրջանառու միջոցների միջև հարաբերությունը չի կարող միատեսակ լինել։

Մյուս կողմից հասարակությունը շահագրգռված է արտադրությունը ընդլայնել շրջանառու միջոցների նվազագույն ծախսումներով։ Դրա համար անհրաժեշտ է արագացնել այդ ֆոնդերի պտույտների քանակը։ Շրջանառու միջոցներն ինչքան արագ կատարեն իրենց շրջապտույտը, այսինքն՝ որքան կարճ է արտադրության և շրջանառության ժամանակը, այնքան արդյունավետ կօգտագործվեն շրջանառու միջոցները և շատ արտադրանք կթողարկվի ու կիրացվի յուրա-

քանչյուր մեկ ռուբլու շրջանառու միջոցի հաշվով։ Դա կտանի նրանց որոշ մասի ազատմանը, որը կազդի արտադրության պրոցեսում անմիջապես զբաղված շրջանառու միջոցների, ինչպես և նրանց կուտակման փոքրացման վրա։

Կարևոր կառուցվածքային համամասնությունների թվին են պատկանում նաև մի կողմից շենքերի ու կառույցների, մյուս կողմից սարքավորումների կուտակման հարաբերությունը։

Արտադրության պրոցեսում հիմնական արտադրական ֆոնդերի կատարած դերին համապատասխան, դրանք բաժանվում են երկու մասի՝ ակտիվ և պասիվ։ Ակտիվ մասին են պատկանում աշխատանքի մեքենայական միջոցները, այսինքն սարքավորումները, գործիքները, ուժային տեղակայում և այլն։ Ի տարբերություն դրանց, շենքերը, կառույցները, ընթացքային ուղիները և այլն կազմում են պասիվ մասը։

Ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի նյութա-առարկայական կազմը միատեսակ չէ։ Այդ տարբերությունը որոշվում է բազմաթիվ պարագաներով և ամենից առաջ, վերարտադրության պրոցեսում ճյուղի առանձնահատկություններով։ Հայկական ՍՍՀ արդյունաբերա-արտադրական հիմնական ֆոնդերի կազմում մոտավորապես -/3-ը բաժին է ընկնում շենքերին, կառույցներին և միայն 1/3-ը՝ մեքենաներին և սարքավորումներին։

Աշխատանքի մեքենայական միջոցների բաժինն է՛լ ավելի փոքր է գյուղատնտեսական ձեռնարկություններում։ Աշխատանքի մեքենայական միջոցների ամենաբարձր տեսակարար կշիռը շինարարության և տրանսպորտի մեջ է։ Այսպես, շինարարությունում դրանք կազմում են մոտավորապես 60 տոկոս, երկաթուղային տրանսպորտում՝ 40, իսկ ավտոմեքենայական տրանսպորտում՝ 80 տոկոս։

Արտադրության աճի բարձր թափերի ապահովման խնդիրները և նրա արդյունավետության բարձրացումը պահանջում է հիմնական ֆոնդերի տեսակային կառուցվածքի կատարելագործում։ Ազգային եկամտի աճման իմաստով ամենաշատ տնտեսական արդյունք տալիս է կապիտալ ներդրումների այնպիսի կառուցվածքը, որի դեպքում նրանց գերիշխող մասն ուղղվում է մեքենայական միջոցների ստեղծմանն ու կատարելագործմանը, որոնք նպաստում են արտադրության արդյունավետության բարձրացմանը։ Այդ պրոբլեմի լուծումը կախված է բազմաթիվ գործոններից, որոնցից կարևորները հանդիսանում են կապիտալ ներդրումների օգտագործումը գերազանցապես գործող ձեռնարկությունների վերակառուցման և ընդլայնման համար, որը հնարավորություն է տալիս ոչդալիորեն կրճատել նոր շենքերի ու կառույցների և այլ շինարարությունը։ Նոր թեթև կոնստրուկցիաների շենքերի ու կառույցների ներդրումը, կառույցների շրջափակումը, բաց երկնքի տակ ագրեգատների և տեխնոլոգիական ապարատուրաների տեղադրումը, արտադրության կոմբինացումը և մասնագիտացումը, արտադրական սարքավորումների արդյունավետ տեղաբաշխումը և օգտագործումը, շինարարական աշխատանքների էժանացումը ապահովում են շենքերի ու կառույցների ծախսերի և հիմնական ֆոնդերի արժեքի բաժնի իջեցումը՝ նրանց ակտիվ մասի բաժնի բարձրացման պայմաններում։ Հայկական ՍՍՀ կապիտալ ներդրումների կառուցվածքը վերջին տարիներին ներկայացնում է հետևյալ պատկերը[7]։

Ընդհանուր ծավալի նկատմամբ տոկոսներով

Տարիներ	Ընդամենը	Կապիտալ ներդրումները պետական պլանով առանձնացված միջոցների հաշվին		
		Այդ թվում		
		Շինմոնտաժային աշխատանքներ	Սարքավորումներ, գործիքներ և ինվենտար	Այլ աշխատանքներ
1958	100	74	22	4
1959	100	70	26	4
1960	100	67	22	11
1961	100	64	25	11
1962	100	65	26	9
1963	100	64	26	10
1964	100	63	28	9
1965	100	63	27	10

7 Народное хозяйство Армянской ССР в 1965 г., Стат. ежегодник, 1966, стр. 167.

Ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից ուսումնասիրվող ժամանակաշրջանում մեքենաների և սարքավորումների վրա կապիտալ ծախսումների բաժինն անշեղորեն բարձրացել է։

Արտադրական կարողությունների ամեն կերպ ավելացումը պահանջում է իրականացնել մեծ ծավալի նոր շինարարություն, հատկապես այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են էլեկտրաէներգետիկան, գունավոր մետալուրգիան, քիմիական և արդյունահանման արդյունաբերությունը։ Առանց նոր շինարարության հնարավոր չէ լուծել արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխման խնդիրն արտադրանքի արտադրության նույն ծավալի պահպանման դեպքում հասարակական աշխատանքի առավելագույն խնայողություն նվաճելու սկզբունքը հաշվի առնելով։ Սակայն հայտիվ թե կարելի լինի տնտեսապես կատարելագործված համարել ներկայումս գոյություն ունեցող կապիտալ ներդրումների կառուցվածքը, որի մեջ շինմոնտաժային աշխատանքների վրա կատարվող ծախսումները կազմում են $^2/_3$-ից մի փոքր պակաս։ Այդպիսի կառուցվածքը, որտեղ մեքենայական միջոցներ ստեղծելու համար կապիտալ ծախսումների տոկոսը կազմում է շնչին մեծություն, չի կարող ետ չպահել արտադրանքի ամենամյա աճի թափը։ Կապիտալ ներդրումների կառուցվածքի էական փոփոխությունը աշխատանքի մեքենայական միջոցների վրա կատարվող ծախսերի բաժնի դգալի բարձրացման ուղղությամբ, հնարավորություն կտա մեծացնել տնտեսական աճի թափը։

Այսպիսով, ազգային եկամտի կուտակվող մասի համամասնությունների հետագա կատարելագործումը հանդիսանում է հզոր և տեխնիկապես առաջադեմ արտադրական ապարատի ստեղծման կարևոր պայման, որն ապահովում է ընդլայնված վերարտադրության բարձր թափ և առավել լրիվ է բավարարում ժողովրդի նյութական ու կուլտուրական պահանջմունքները։